ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 25

«14» մայիսի 2020 թվական գյուղ Թորոսգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈԳՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱԼՈ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՊԱՀԵՍՏԻՆ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՊԱՀԱԿԱՏԱՆԸ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հաշվի առնելով քաղաքացի Գալո Պատվականի Գալոյանի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Գոգհովիտ բնակավայրի 11-րդ փողոց, 3 շենք հասցեում գտնվող /կադաստրային ծածկագրեր 08-034-0022-0003-001, 08-034-0022-0003-002, 08-034-0022-0003-003, 08-034-0022-0003-004, սեփականության վկայական 03122018-08-0042/ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Գոգհովիտ բնակավայրի բնակիչ Գալո Գալոյանին սեփականության իրավունքով պատկանող պահեստին (355.39մ²), անասնաշենքին (325,17մ²), օժանդակ շինությանը (148,09մ²) և պահակատանը (13,66մ²) տալ քանդման թույլտվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«14» մայիս 2020 թվական
գյուղ Թորոսգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 26

«15» մայիսի 2020 թվական գյուղ Թորոսգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՐՈՍԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 4-րդ մասի 1-ին կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի թիվ 14 որոշումը, աճուրդներ և մրցույթներ կազմակերպող ու անցկացնող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատի համայնքային հանձնաժողովի 2020 թվականի ապրիլի 6-ի թիվ թիվ 17 և 18 արձանագրությունները

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Թորոսգյուղ բնակավայրի Գոգհովիտի խճուղի, հողամաս 2 հասցեում /կադաստրային ծածկագիր 08-042-0213-0014, վկայական 1303202-08-0020/ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0,030847 հա հողամասը 90 /իննսուն/ տարի ժամկետով, տարեկան՝ 5000 /հինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ վարձավճարով, կառուցապատման իրավունքով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Հողմիկ բնակավայրի 4-րդ փողոց, տուն 1 հասցեի բնակիչ Համբարձում Մխիթարի Զաքարյան:

2. Քաղաքացի Համբարձում Մխիթարի Զաքարյանի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրման պայմանագիրը և դրանցից բխող իրավունքները ներկայացնել օրենքով սահմանված կարգով պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«15» մայիս 2020 թվական
գյուղ Թորոսգյուղ